




ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԻՐԱՔ



Առաջնորդ սրբազան հայրը նորընծաների հետ

Ձեռամբ թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանի և խարտավիակությամբ արժ. Տ. Օշական ավ. քնն. Գլխավոր, տեղի ունեցավ կիսասարկավագական ձեռնադրություն Ս. Ստեփաննոս տոնին հաջորդ օրը, ուրբաթ, 26 դեկտեմբեր 1986-ին, հրնթացս տուրք և անմահ պատարագի, Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցվո մեջ:

Հոծ բազմության մը ներկայության հինգ դպիրներ ծնկաչոք մոտեցան առաջնորդ սրբազան հոր՝ ստանալու համար բազկուրար կրելու արտոնություն ըստ Մաշտոցի:

Սույն հոգեպարար արարողության իրենց մասնակցությունը բերեցին քահանայից, սարկավագաց ու դպրաց դասերը, ընծայալներուն ծնողներն ու պարագաները և խոտներամ հավատացյալներ:

Հետ ձեռնադրության խորհուրդին առաջնորդ սրբազան հայրը տվավ իր հայրական պատգամն ու խրատականը՝ «Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ» սաղմոսներն առնված բնաբանին ներքո:

*
* *

Ժամանակէ մը ի վեր բոլոր այն տօնական օրերը որոնք շաբթուան ընթացքին՝ գործի օրերուն կը հանդիպին, մասնաւոր կարգադրութեամբ արարողութիւններն ու պատարագները տեղի կ'ունենան երեկոյեան որպէսզի առիթը ընծայուի հաւատացեալ ժողովուրդին մասնակցութիւնը բերելու կազմակերպուած ժամերգութեան:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս բացառիկ հանդիսաւորութեամբ նշուեցաւ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ տօնակատարութիւնը իրաքաճայ թեմէն ներս Պաղտատի առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ 26 փետրուար 1987, հինգշաբթի երեկոյեան: Ներկայ էին մօտ հազար հաւատացեալներ:

Աղօթասացութիւնը սկսեցաւ երեկոյեան ժամերգութեամբ, որուն ընթացքին կատարուեցաւ նախատօնակ նուիրում «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ Զօրավարացն Մերոց հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Յետ ժամերգութեանց՝ ազգային սոյն մեծ տօնին առիթով՝ պատարագեց թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ա. Ազ եպս. Ասատուրեանը: Պատարագի երգեցողութիւնը կատարեց առաջնորդանիստ եկեղեցւոյ երկսեռ «ԶՈՒՍԱՐԹՆՈՅ» քառաձայն դպրաց դասը՝ ղեկավարութեամբ բերեցնորհ Մարկոս սարկաւագ Իսթէնտեր-

եանի: Մեներգեցին օրիորդներ՝ Ծաղիկ Փշոկեան, Սեդա Խալաթեան ու այրն, Արամ Քէթնիճեան: Զարոգէն առաջ կատարուեցաւ Հայրապետական մատթանք՝ արեւշատ օրեր հայցելով Ազգիս Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբութեան անուանակոչութեան տօնին բարեբաւտ աղօթի:

Զարոգի սկզբնաւորութեան սրբազան հայրը հաւատացեալ ժողովուրդին փոխանցեց վերջերս Մայր Աթոռէն ստացուած թղթակցութեան մէկ հատուածը, որը միաթարութեան ակունք հանդիսացաւ իրաքաճայ մեր հաւատացեալ ժողովուրդին ի մասնաւորի այն ուշադրութեան համար որ Ազգիս Վեհափառ Հայրապետը կը տաժէ հանդէպ Իրաքի օրհնեալ հողին վրայ ապրող հայութեան:

Ապա Սրբազան Հայրը տուաւ յաւուր պատշաճի իր պատգամը:

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Զանգի Հայր մեր զՍուրբ Աւետարանն գիտեմք, եւ Մայր՝ զԱռաքելական եկեղեցի ընդհանրական»:

(Եղիշէ)

Այս օրերուն երբ Մայր Եկեղեցին ամենուր կը պատրաստուի ոգեկոչելու պանծալի ու գերահրաշ յիշատակը Ղեւոնդեանց ու Վարդանանց հերոսամարտութեան, իրաքաճայ թեմն ալ ջանադիր է մատուցմամբ ու պատարագի եւ ինչպէս այս նուիրական պահուն կը տեսնեմ հարիւր հարիւրաւոր մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցութեամբ, իր խղճի պարտքը կատարելու հանդէպ անոնց, որոնք աննկուն խիզախութեամբ եւ անդդուելի վճռակամութեամբ որոնեցին անձնորոգութեան ճանապարհը, որ բոլորին պիտի առաջնորդէր իմացեալ մահուան՝ դառնալով կենդանի մահաւակներ, որոնք մարտիրոսացան վասն հայութեան գոյատեւման:

Ի՞նչ վեհ գիտակցութիւն եւ ի՞նչ արիական արարք, որ ահաւախկ 15 դարեր շարունակ յատուկ տօնակատարութեամբ կը վերափռուի հանուր հայութեան կողմէ թէ ի հայրենիս եւ թէ ի սփիւռս աշխարհի:

Ի՞նչ վեհ գիտակցութիւն եւ ի՞նչ գովելի արարք մերօրեայ հայոց համար մանաւանդ, երբ քով քովի գալով ու զգալով արեւան կանչը մեր հայկազեան ցեղին, կը փութանք սոյն ոգեկոչումով հայրենեաց հողի ընդերքներէն դուրս բերել Վարդանն ու Ղեւոնդը՝ ներշնչուելու անոնց խորագաց հաւատքէն, հոգեկորով ազգամարտութենէն եւ անսակարկ հայրենասիրութենէն:

Եկե՛ք բոլորս միասին պահ մը ունկընդ-
րենք այն օրերու հայրության պատուաբեր
ձայնը, որպէս հրաշակերտ պատասխան
առ պարսիկ անողոք ու անողորմ թշնա-
մին.

«Քանզի Հայր մեր գնորք Աւետարանն
Գիտեմք, եւ Մայր՝ գԱռաքելական
Եկեղեցի ընդհանրական»:

Ահա հայության հոգիէն ծորող, հայու-
թեան սիրտէն աղբերացող ու պարսից հա-
մար անսպասելի այն պատասխանը որով
հայութիւնը ինքզինք ամրապնդեց որպէս
քրիստոնէայ ժողովուրդ, ինքզինք ընդու-
նեց որպէս Էջմիածնաշէն սերունդ, ինք-
զինք ըմբռնեց որպէս այբուբենի ժառանգ,
ինքզինք բիրեղացուց որպէս ուրոյն ազգ՝
իր իսկ մշակութային նկարագրով, ինքզինք
արտայայտեց իբրեւ միասիրտ ու միական
ժողովուրդ Քրիստոսի Աւետարանով լու-
սագարդեալ, Քրիստոսի հիմնած եկեղե-
ցիով՝ Սուրբ Էջմիածնով կերպարանա-
փոխուած ու սրբութիւն սրբոց այս աստ-
ուածակերտ տաճարի խորհուրդով վերա-
նորոգուած որպէս քրիստոսատես ժողո-
վուրդ:

Նախախնամողն Աստուած իր տասնա-
բանեայ պատուիրանաց մէջ կը պատգամէ

Հաւատք՝ հանդէպ հայ ժողովուրդի սրբութեանց,
Հայ ժողովուրդի հոգեւոր թէ աշխարհիկ մշակոյթին,
Սովորութեանց, սրբազան աւանդութեանց ու Սուրբգրական
Հոգին արմենական:

Հաւատք՝ հանդէպ ընտանեկան սրբութեանց,
Ծնողի նկատմամբ երախտագէտ զգացումներով
Բոցավառուած, այս պարագային ծնողն ընդունելով
Իբրեւ Աւետարանն ու Եկեղեցին Հայկական.

Հաւատք՝ որ իրենց մղեց Աւարայր իջնելու
Քաջ գիտնալով թէ թուային անհաւասարութիւն
Եւ զինամթերքի անհամեմատութիւն
Կը տիրէր իրենց եւ
Զրադաշտ թշնամիին միջեւ:
Հաւատք՝ որ պիտի այլակերպեր
Իրենց մարդկային տկարութիւնները,
Զանոնք մէկընդմիջտ անդրանցնելով.

Հաւատք՝ որ պիտի պրկեր իրենց՝ հայ հոգիին տարերքը
Հրաշք գործելու ներշնչանքով:
Ու պատահեցաւ հրաշքը, որովհետեւ գտնուեցան հրաշագործները:

մարդկութեան՝ պատուել ծնողները: Վար-
դանանց սերունդն ալ իր վերոյիշեալ յայ-
տարարութեամբ որպէս դաստիարակիչ
ծնողք կընդունէր Աւետարանն ու եկեղե-
ցին: Հետեւապէս ծնողի մը պաշտպանու-
թիւնը տիրահաստատ գրաւական մը հա-
մարելով, Վարդանն ու Ղեւոնդը, ինչպէս
նաեւ համայն ժողովուրդն հայոց իջան Ա-
ւարայր, անհատականութեան դափնեպսակին
ալփնանալու պատրաստակամութեամբ,
որդիական պարտականութեան մը կատա-
րումի սրբազան գիտակցութեամբ: Ահա թէ
ինչու սերունդէ սերունդ միշտ թարմ մնա-
ցած է Վարդանանց յիշատակը, քանզի
ամէն սերունդի համար այժմէական է ծնո-
ղի ու զակի յարաբերութիւնը, զոր անհա-
տապէս կապրինք մեր սրտի զարկերուն
հետ:

Այո, ամէն սերունդ հարց պէտք է տայ
ինքնիրեն թէ ինչո՞ւ միւշել օրս, 1500 տա-
րիներ անընդհատ ամէնուրեք հայութիւնը
կը տօնակատարէ յիշատակը Վարդանանց
մարտիրոսաց:

Վարդանանց ու Ղեւոնդեանց պարագա-
յին իրենց յանդիման գաղտնիքը կը
գտնենք իրենց խոր ու անզուգական հա-
ւատքին մէջ,

Վարդանանք ու Ղեւոնդեանք նահատակուեցան իմացեալ մահուամբ, վասն հաւատքի, եկեղեցւոյ, ազգի, մշակոյթի, սղոքազան ու տոհմիկ ատանդութեանց, հայոց հողի ազատութեան ու այս բոլորի ազատ պայմաններու մէջ զարգացման հեռանկարով:

Անոնք՝ 1036 ինքնագոհ հայորդիներ նահատակուեցան՝ որպէսզի մնայ հայութիւնը, մնայ հայ ժողովուրդը իր բոլոր արժէքներով ու արժանիքներով:

Եւ որովհետեւ մնաց հայութիւնը, մնաց նաեւ հայը, ահա թէ ինչու կանք եւ այսօր մենք: Մեր ներկայութիւնը այսօր այլ ազ-

գերու կողքին ինքնին գոյութեանկան ապացոյցն է Վարդանանք յայտնականին:

Ու մեր կեանքով Վարդանն ու Ղեւոնդը, իրենց հաւատաւոր զինակիցներն ու Հայոց աշխարհի տիկնաք փափկասունք ահաւափկ այս օրերուն թողլով իրենց երկնաւոր, լուսաւոր ու երանական բնակարանը դրախտային, կիջեալն են մեր մէջ անգամ մը եւս խրախուսելու գմեզ՝ ապրելու ու յառաջդիմելու հայալայել կենցաղով:

Ի տես վերոյիշեալ պատկերին եւ որպէս իրաքահայեր մենք պարտինք հարց տալ մեր խղճին՝

Եթէ Վարդանն ու Ղեւոնդը նահատակուեցան
Ի սեր հայ ժողովուրդի հաւատալիքներուն,
Եւ արդեօք ունի՞մ այդ հրաշագործ ու ներգործող հաւատքը
Որ կրնայ այլակերպել նաեւ զիս:

Եթէ անոնք իրենց կեանքը զոհեցին
Մեր հիասքանչ մայրենիքին՝ մեարսաստաւ լեզուին համար
Եւ արդեօք որքա՞ն խղճութեամբ
Կը բարբառիմ իմ սեպհական լեզուով:

Եթէ Վարդանն ու Ղեւոնդը պատարագուեցան,
Հայ ժողովուրդի դատարարակ մօր՝ Հայաստանեայց
Առաքելական Եկեղեցւոյ Սուրբ Խորանին առաջ,
Եւ արդեօք կ'աշխատի՞մ անոր
Պայծառացման ու գոյատեւութեան ի նպաստ՝
Հանդիսանալով իմ եկեղեցւոյս հարազատ զաւակը:

Եթէ անոնք իրենց թանկագին կեանքը դրին
Հայ ժողովուրդի մշակոյթի գոհասեղանին վրայ
Ի խնդիր նոյնիքն այդ մշակոյթի քիւրեղագման,
Ծաւալման ու զարգացման, եւ՝ իբրեւ արդիւնքը
Այդ նուիրական մշակոյթին, արդեօք ջանադի՞ր եմ
Ապրելու անով եւ անոր համար:

Վերոյիշեալ հարցումներուն տրուելիք դրական պատասխաններուն մէջ մենք կը գտնենք իրաւ եւ վաւերական ըմբռնումը Վարդանանք խորհուրդին:

Ունի՞մք արդեօք պատասխան մը ազգովին մեզ յուզող հարցերուն վերաբերեալ, ինչպէս ունեցան Վարդաններն ու Ղեւոնդ-

ները իրենց ժամանակին դժուարութեանց դէմ յանդիման:

«Ծնորհ, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ Զեզ ընդ ամենեսեանդ. ամէն»:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՍԹԵՐՏԱՄԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՆՔԸ ՎԵՐԱԳՆՎԱԾ

Գոհունակությամբ կտեղեկացնենք մեր ժողովուրդին, թե Ամթերտամի (Հոլանտա) հայ եկեղեցվո պատմական շենքը վերագնվեցավ ուրբաթ օր, 14 նոյեմբեր 1986-ին: Գնման պաշտոնագիրը, հանուն Հայաստանյայց Եկեղեցվո, ստորագրվեցավ Եվրոպայի հայոց կաթողիկոսական պատվիրակության ընդհանուր տեղակալ Տ. Գյուտ եպիսկոպոս Նազգաշյանի և Ամթերտամի գաղութի ազնվական անդամ պրն. Վահե Գինեպանյանի կողմե:

Արդարև, 26 հոկտեմբեր 1713-ին հիմնված է Ամթերտամի հայոց եկեղեցին՝ հանուն ՀՈԳՎՈՒՅՆ ՍՐԲՈ, որ կգտնվի Քրոմպուստոթ փողոցին վրա՝ թիվ 22: Մինչ այդ՝ Հոլանտայի հայերը իրենց կրոնական պաշտամունքը կունենային վարձու շենքի մը մեջ:

9 մարտ 1874-ին եկեղեցին, հայ համայնքի նվազեցման պատճառով, անուրդով վաճառված էր Հոլանտական Կրոնավորութիւններու Միաբանության մը, որ մինչև օրս զայն որպէս մանկապարտեզ և դպրոց կօգտագործէին:

Վերջին շուրջ քսան և հինգ տարիներու ընթացքին Հոլանտայի հայոց թիվը վերստին աճեցավ և կարևոր համայնքի մը վիճակը զգեցավ՝ հատկապէս Ինտոնեզիայէն, Թուրքիայէն, Պարսկաստանէն և ընդհանրապէս Մերձավոր Արևելքի զանազան երկիրներէն եկող և այստեղ բնակություն հաստատող մեր հայրենակիցներուն շնորհիվ:

Մեր ժողովուրդին իսկ խնդրանքով, տարիներէ ի վեր դիտավորությունը ունեինք պատմական մեր այդ եկեղեցվոյն վերափրանալ ու առ այդ՝ երջանկահիշատակ Տ. Սերովքե արքեպս. Մանուկյանի օրէն իսկ դիմումներ եղան այն ատենվան Ութբեխթի Արքեպիսկոպոս Կարտիմալ Ուիլըպրանտսի և քաղաքապետության մոտ, առանց արդյունքի:

Վերջապէս, Հոլանտացի Կրոնավորութիւններու Միաբանությունն ինք վաճառքի դրավ շենքը, գնելու նախապատվությունը առաջարկելով մեզ:

Մեր գաղութը խանդավառությամբ լծվեցավ իր տկար կարելիություններով իրագործել գնումը և վերափրացումը իր ավելի քան 270-ամյա պատմական եկեղեցվոյն, անմիջապէս գոյացնելով շենքին արժեքին անհրաժեշտ գումարին մեկ երրորդ բաժինը:

Գիտնալով համեստ կարելիությունները մեր համայնքին ու ապրելով անոնց խանդավառ բարեպաշտական, եկեղեցասիրական և հայկական զգացումները, խոնարհաբար ներկայացանք Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վագգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ գնահատելով իր Հոտին այս նախաձեռնությունը՝ նվիրեց գնման անհրաժեշտ գումարին երկրորդ մեկ երրորդ բաժինը:

Նույն զգացումով դիմեցինք նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, որ նույնպէս ընդառաջ գնաց մեր քաղձանքին, ինք ևս հատկացնելով անհրաժեշտ գումարին մնացյալ մեկ երրորդի բաժինը:

Ամթերտամի եկեղեցվո շենքը՝ Նոտարական գործողությանց ծախսերով արժեք 335.823,43 հոլանտական ֆլորին: Սույն գումարը գոյացավ ըստ հետևյալին.

95.905,33 ֆլորինը՝ Ժողովրդային մասնակցությամբ գոյացավ.

129.918,10 ֆլորինը՝ Ս. Էջմիածնէն՝ Վեհափառ Հայրապետը նվիրեց.

110.000,00 ֆլորինը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը նվիրեց:

Ահա այսպես, այսօր, տիրացումովը մեր պատմական եկեղեցվո եռահարկ շենքին, Հոլանտայի գաղութին մեր անցյալ պատմությունն է, որ կվերսկսի:

Սույն շենքը պատմական հիշատակարան մըն է, լավ և հաստատուն վիճակի մեջ, նախկին բոլոր արձանագրությունները կմնան ըստ առաջնույն:

Ծուտով, շենքին առաջին հարկը պետության ալ օժանդակությամբ պիտի վերագտնեն իր նախնական դիմագիծը և որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի պիտի դառնա Հոլանտայի մեր զավակներուն Աղոթքի Տունը:

Մնացյալ հարկերն ալ որպես դպրոց և համայնքի տուն պիտի ծառայեն մեր ժողովուրդի համախմբումին՝ իր լեզվին և ավանդությանց շուրջ:

Հուրախություն հայ ժողովուրդին հայտնելով այս քարի արդյունավորությունը,

Կմնանք միշտ աղոթարար՝

ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՇՅԱՆ
ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԱԿԱՆ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ՓԱՐԻԶԻ

Փարիզ,

26 հունվար 1987 թ.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՍՑ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
ԼԻՈՆԻ ՄԷՋ

30 ԱՊՐԻԼԷՆ—2 ՄԱՅԻՍ 1987

Սույն թուականի 30 Ապրիլէն—2 Մայիսի օրերուն, Լիոնի Սուրբ Իրէնէ Վանքին մէջ, տեղի ունեցաւ Արեւմտեան Եւրոպայի Հայ Հոգեւորականաց Խորհրդակցական Հանդիպում մը՝ նախաձեռնութեամբ եւ հրաւերովը՝ Եւրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատուիրակութեան Ընդհանուր Տեղակալ Գերշ. Տ. Գիտ Եպս. Նազգաշեանի:

Հանդիպման նպատակն էր՝ Հոգեւոր կրթութեան, խոկումի, առանձնացման եւ աղօթքի պահերուն գլուհներ՝ ունկնդրել շարք մը դասախօսութիւններ:

Ժողովի բացումէն վերջ, որ կատարուեցաւ Գերշ. Տ. Գիտ Եպս. Նազգաշեանի կողմէ, կարդացուեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի Օրհնութեան Պատգամը՝ ուղղուած Համագումարի մասնակ-

ցողներուն: Վեհափառ Հայրապետի Գիրը կարդաց, այս առթիւ ժամանած, Նորին Սրբութեան պատգամաբեր՝ Մոսկուայի Հայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ՝ Հոգշ. Տ. Տիրան Վրդ. Կիրեղեան:

Այնուհետեւ ընտրուեցաւ Խորհրդակցական Հանդիպման Դիւանը՝ հետեւեալ կազմով.—

Ատենապետ՝ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան:

Ատենադպիր՝ Հոգշ. Տ. Տարօն Ժ. Վրդ. Ծերէճեան:

Դիւանին կից՝ ընտրուեցաւ նաեւ Համագումարի աշխատանքները քանադեղ Յանձնախումբ մը, լանձինս.—

Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Ալքազեանի,

Հոգշ. Տ. Զատիկ Աթլ. Աւետիքեանի,

Հոգշ. Տ. Ասողիկ Աթլ. Արիստակէսեանի:

Այնուհետեւ կարդացուեցան հետեւեալ Դասախօսութիւնները.—

ա.—ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ՝ ԻՐ ԿՈՉՄԱՆ
ՀԵՏ—Գիտ Եպս. Նազգաշեան—;

բ.—ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ ՊԱՇՏՊԱՆ՝ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԱԽԱՆՈՒԹԵԱՆ—
Ներսէս Ժ. Վրդ. Բապունեան—

գ.—ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ ՆԱԽԱՆՁԱԽԵԼՆ-
ԴԻՐ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԷՍԻՆ, Ա-
ԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԼԵԶՈՒԻՆ—
Նորվան Եպս. Զաքարեան—

Իրաքանչիւր զեկուցումէ վերջ տեղի ու-
նեցան մտքերու փոխանակումներ, ինչպէս
նաեւ կատարուեցան զանազան օգտակար
առաջարկներ եւ թելադրութիւններ:

Երկօրեայ Հաւաքը իր լրումին հասաւ
Գերշ. Տ. Գիւտ Եպս. Նազգաշեանի եզ-

րափակիչ Խօսքով, ուր Սրբազան Հայրը
յայտնեց թէ ասկէ յետոյ տարին երկու ան-
գամ կանոնաւոր կերպով նմանօրինակ ժո-
ղովներ պիտի հրապիրէ՝ քննարկելու հա-
մար Եկեղեցականին եւ Եկեղեցւոյ կեան-
քին առնչուող զանազան հարցեր՝ ի խըն-
դիր Արեւմտեան Երոսպայի Հայ Համայնք-
ներու Կրօնական, Բարոյական եւ Ազգա-
յին կեանքին առաւել կազմակերպման:

Դ Ի Ի Ա Ն

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՑ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔ ԲԵԼԳԻԱՅԻ ԲՐՅՈՒՍԵԼ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

«Այսպէս ասէ Տէր. շինեցեն տունս եւ
ինքեանք բնակեցեն...» (Եսայի ԿԵ 21):

Բելգիահայ բարեպաշտ ժողովուրդը, որ-
պէս Եկեղեցի հավաքական, երկար տարի-
ներից ի վեր կարոտում էր ունենալ իր Ա-
ղոթքի տունը:

Այդ ուղղությամբ տարիներից ի վեր աշ-
խատանքներ էին տարվում Բելգիայի «Գա-
ղութային վարչության» կողմից, անմիջա-
կան հսկողության ներքո վարչության նա-
խագահ պրն. Էրուարդ Ժախյանի, փոխ-
նախագահ Համրի Օլլյանի եւ ընդհ. քար-
տուղարուհի օր. Ժիզել Ստեփանյանի:

«Գաղութային վարչության» կողքին մեծ
աշխատանք էին տանում նաև «Եկեղեցւոյ
շինութեան վարչության» անդամները:

Նախապատրաստական աշխատանքները
ավարտելուց հետո «Գաղութային վարչու-
թեան» անդամները եկեղեցւոյ շինութեան
ծրագրով ներկայացնում եւ հավանություն են
ստանում Արևմտյան Երոսպայի Հայրապե-
տական Պատվիրակութեան ընդհանուր տե-
ղակալ եւ Փարիզի առաջնորդ Գլուտ Եպս.
Նազգաշեանից, որն իր հերթին այս հույժ
կարևոր ձեռնարկը ներկայացնում է Նորին
Սրբութեան Վազգէն կաթողիկոսի ուշադրու-
թեանը:

Աստուծոյ օգնականութեամբ եւ օրհնու-
թեամբ Վեհափառ Հայրապետի, կիրակի,
նոյեմբերի 16-ին, առաջնորդ սրբազանը, ու-
ղեկցութեամբ Դավիթ Եպս. Սահակյանի,
Ներսէս Ժ. վրդ. Փարուջանի, Ասողիկ աբղ.
Արիստակեսյանի, սարկավագաց եւ դպրաց
դասերի, ինչպէս նաև մի շարք ուխտավոր-
ների, ժամանում է Բրյուսել, կատարելու
համար եկեղեցւոյ հիմնարկեքը:

Եկեղեցւոյ հիմնարկեքի արարողութեան
առիթով Բրյուսել էին ժամանել Վազգէն
Եպս. Քեշիշյանը, Հ. Բ. Ը. Մ. Նախագահ
պրն. Ալեք Մանուկյանը իր տիկնոջ եւ դու-
տեր հետ, ինչպէս նաև արտասահմանի
հայ գաղութներից այլ ազգային դեմքեր: Ա-
րարողութեանը իրենց մասնակցութեամբ
պատվելու էին եկել նաև տեղւոյն թագա-
վորութեան ներկայացուցիչները:

Լեպի-լեցուն էր Բիւնդերմանս փողոցը բել-
գիահայերով: Եկել էին բոլորը, եկել էին՝
հնազանդ Աստուծոյ ձայնին, զի «Այսպէս
ասէ Տէր. շինեցեն տունս եւ ինքեանք
բնակեցեն»:

Առաջնորդ սրբազանը, շրջապատված
հոգևոր եւ դպրաց դասերով, սկսում է ա-
րարողությունը: Ծուրջ մեկ ժամ տևող այդ
հոգեպարար արարողությունը, ըստ «Մայր
Մաշտոցի» «Կարգ հիմնարկութեան եկե-
ղեցւոյ», իր ավարտին է մոտենում խորա-
նի կանգնեցման տեղում մագաղաթաւ հի-
շատակարանի գետեղումով. «Յամի Տեառն
1986, ի 16-րորդում արար ամսեանն Նո-
յեմբերի, Օրհնեցան Հիմունք Հայաստան-
եայց Առաքելական Եկեղեցւոյն Պրիսելի,—
Պելժիոյ, Ի Հայրապետութեանն Տեառն
Տեառն Վազգէնի Առաջնոյ Ծայրագոյն
Պատրիարքին եւ կաթողիկոսին Ամենայն
Հայոց, եւ ի թագաւորութեանն Պելժիոյ՝ Պո-
տուէնի Առաջնոյ եւ Թագուհւոյն Ֆապիո-
լաի, եւ ի Պատուիրակութեանն Երոսպայի
Հայոց՝ Տեառն Գիւտի Սրբազան եպիսկո-
պոս Նազգաշեանի: Տէր Աստուած, Զգործս
ձեռաց մերոց ուղիղ արացէ. եւ զգործս
ձեռաց մերոց յաջողեցէ: Ամեն»:

Ապա Գաղութային վարչութեան նախա-

գան պրն. Էդվարդ Ժախյանը ընթերցում է Վեհափառ Հայրապետի ողջույնի հեռագիրը (տես «Էջմիածին» ամսագիր, 1986 թ., № № ԺԱ—ԺԲ, էջ 15):

Հավարտ հեռագրի ընթերցման խոսք առնելով, հանուն «Գաղութային վարչություն», պրն. Ժախյանը իր խոսքի մեջ վեր հանեց Հայ եկեղեցու պատմական դերը հայ ժողովրդի կյանքում:

Ապա առաջնորդ սրբազան հայրը ոգեշունչ խոսք ասաց այս ուրախ առիթով, և ժողովուրդը միասնաբար երգեց «Հայր մեր» աղոթքը:

Հուսով և սիրով սպասենք եկեղեցու օծմանը:

— Երանի եկեղեցի շինողաց...

ԱՍՈՂԻԿ ԱԲՂ. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹ



Մի պահ ձեռնադրությունից

Հնդկահայ գաղութը մեր հնագույն գաղութներից է և ժամանակին այն ունեցել է հասարակական-քաղաքական աշխույժ և բուռն կյանք: Այժմ այս գաղութը ապրում է իր մայրամուտը: Բոմբեյ, Մադրաս և Կալկաթա քաղաքներում և նրանց շրջակայքում կան հայկական յոթ եկեղեցիներ, որոնք, ցավոք սրտի, զուրկ են հոգևոր-եկեղեցական կյանքից: Գաղութի փոքրաթիվ հայությունը յուրաքանչյուր կիրակի հավաքվում է նշված եկեղեցիներում՝ երգեցողությամբ միայն գոհացում տալու հայի և քրիստոնյայի իրենց կարոտակեզ զգացումներին:

1986 թվականի հոկտեմբերի 10—31 օրերին հովվական այցելությամբ Բոմբեյ և Կալկաթա այցելեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ գերազնորհ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյանը:

Ավելի քան երկու շաբաթ առաջնորդ սրբազան հայրը եղավ Կալկաթայում, որտեղ համեմատաբար աշխույժ հայկական գաղութային կյանք կա: Այստեղ սրբազան հայրը հանդիպում ունեցավ գաղութի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Մկրտչյանի, եկեղեցու վարչության, Մարդասիրական ճեմարանի ուսուցչական կազմի և աշակերտության, Հայկական Ընկերակցության ու Հայկական Մարզական Ընկերակցության Վարչության և անդամների հետ, ինչպես նաև այցելություններ տվեց հայ ընտանիքներին ու անհատ անձանց: Բոլորի մտահոգությունը մեկ էր՝ գաղութի ապագան:

Հոկտեմբերի 19-ին, կիրակի օրը, առաջնորդ սրբազան հայրը ս. պատարագ մատուցեց Կալկաթայի հայոց Մայր եկեղեցում և հավարտ ս. պատարագի հաղորդակից դարձրեց ներկաներին Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնություններին:

Այնուհետև կատարվեց սարկավազական ձեռնադրություն: Պատարագիչ սրբազան հայրը սարկավազ ձեռնադրեց Մարդասիրական ճեմարանի տեսուչ Վահան Փոլատյանին, որն ավելի քան 30 տարի վարում է այդ չափազանց ծանր ու պատասխանատու պաշտոնը: Նա միաժամանակ ակնառու վաստակ ունի տեղի եկեղեցական և համայնքային ծառայության մեջ:

Հոկտեմբերի 26-ին, կիրակի օրը, Գյուտ Խաչի տոնին, հիշյալ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վարդան քահ. Մկրտչյանը և այնուհետև հակիրճ ու բովանդակալից քարոզ խոսեց՝ վեր հանելով Խաչի տոնի նշանակությունը քրիստոնյայի կյանքում: Սույն քարոզը թարգմանաբար անգլերենով հավատացյալներին հաղորդեց Տ. Աղան սրբազանը:

Հավարտ ս. պատարագի առաջնորդ սրբազան հայրը այցելեց ծերանոց և Աստուծո օրհնությունը բաշխեց նրանց:

Առաջնորդ սրբազան հոր հովվական այցելությունը հնդկահայ գաղութ մի նոր լիցք հաղորդեց և ոգևորություն տեղի հայ հավատացյալներին:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՆՏԻՈՔԻ ԱՍՈՐԻ ՌԻԴԼԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԱՅՑԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

1986 թվականի դեկտեմբերի վերջերին Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Իգնատիոս Զաքար Ա Իվանը, իր շքախմբով, երկու շաբաթ տևողությամբ գտնվում էր Մելբուռնում:

1987 թվականի հունվարի 13-ին, երեքշաբթի օրը, Պատրիարք Սրբազան Հայրը Մելբուռնից մեկնեց Սիդնեյ: Սիդնեյի օդանավակայանում Պատրիարք Սրբազան Հորը դիմավորողների թվում էր նաև Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ գերազնորհ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյանը:

Դիմավորումի և բարիգալստյան պաշտոնական արարողությունից հետո, Պատրիարք Սրբազան Հայրը, իր շքախմբով, առաջնորդվեց Սիդնեյի աստրական Ս. Եփրեմ եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ եկեղեցական արարողություն և ապա տրվեց ճաշկերույթ:

Հունվարի 16-ին, ուրբաթ օրը, Պատրիարք Սրբազան Հայրը պատասխան այցելություն տվեց տեղի հայոց եկեղեցի, որտեղ, եկեղեցու մուտքի առջև, առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոսը ողջագործումով ընդունեց Պատրիարք Սրբազան Հորը:

Այնուհետև քահանա հայրերի, սարկա-

վագների և դպիրների դասերից կազմված թափուրը «Ռուսիա լեր» շարականի երգեցողությամբ Պատրիարք Սրբազան Հորը առաջնորդեց եկեղեցու ատյան, որտեղ հայերեն և ասորերեն լեզուներով կարճ արարողություն կատարվեց:

Հոր, տրվեց ճոխ ճաշկերույթ, որի ընթացքում Աղան եպիսկոպոսը բաժակ բարձրացրեց Սրբազան Պատրիարքի կենաց արևշատության համար:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը բաժակ բարձրացրեց Ամենայն Հայոց Վազ-



Սիդնեյի հայոց Ս. Հարություն եկեղեցում համատեղ աղոթքի պահին

Արարողությունից հետո Աղան եպիսկոպոսը անգլերեն լեզվով ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսք ասաց Պատրիարք Սրբազան Հորը և անդրադարձավ Հայ և Ասորի Եկեղեցիների անցյալի ու ներկայի կրոնական, պատմական և մշակութային փոխհարաբերություններին:

Իր պատասխան խոսքում Պատրիարք Սրբազան Հայրը դրվատանքի խոսք ասաց երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների առթիվ և իր խոսքն ավարտեց բարի մաղթանքներով՝ Հայ և Ասորի Եկեղեցիների անասանության և պայծառության համար:

Եկեղեցական արարողությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով:

Այնուհետև եկեղեցու «Էտկարյան» սրահում, ի պատիվ Պատրիարք Սրբազան

գեն Ա կաթողիկոսի կենաց արևշատության և Հայ ու Ասորի Եկեղեցիների սրտագին և բարեկամական հարաբերությունների համար: Պատրիարք Սրբազան Հայրը անդրադարձավ նաև հայ ժողովրդի մեծ ողբերգության՝ 1915 թվականին Թուրքիայի կողմից կազմակերպված հայկական կոտորածների մասին, որտեղ քիչ չէր թիվը նաև ասորիների:

Ընդունելությունն ավարտվեց Պատրիարք Սրբազան Հոր մաղթանքով և Տերունական աղոթքով:

Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքի այցը Վախտադարյանի հայ գաղութ մի մեր ապագայից է երկու քույր Եկեղեցիների եղբայրական սերտ համագործակցության:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՂԻՐԲԵԶԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ՆՈՐ ՏԱՊԱՆԱՔԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Հայ եկեղեցու երախտավորներից մեկի՝ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի անունն անխզելիորեն կապված է Ադրբեջանի հայոց թեմի պատմության հետ:

հոգևորականը շուրջ վեց տարի եղել է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ և վախճանվել է Բաքվում 1915 թվականի մայիսի 19-ին՝ 49 տարեկան հասակում,



Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի մոր տապանաքարը

Գերմանիայում բարձրագույն կրթություն ստացած, Փարիզում, Լոնդոնում, Կ. Պոլսում, Պետերբուրգում, Մոսկվայում, Կիևում գիտության պաշար և կյանքի փորձ ձեռք բերած, այս մեծանուն գիտնական

ու թաղվել Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կամարների ներքո: Հարգելով Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գիտական և ծառայական մեծ վաստակը, Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու

հավատացյալները իրենց նվիրատվությամբ պատրաստեցին գրանիտե մի մոր տապանաքար՝ ի հավերժացումն մեծանուն հոգեվորականի հիշատակի:

Հունվարի 25-ին, կիրակի օրը, նախագահությամբ Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաքսյանի, հավարտ ա. պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողությունը Կարապետ եպիսկոպոսի հիշատակին: Այս հոգեհանգստյան թափորը հավատացյալների բազմության հետ դուրս եկավ եկեղեցու շրջափակ, ուր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վարդան արք. Դիլանյանը ներկաներին պատմեց Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի կյանքի և գործունեության մասին: Ի մասնավորի հայր սուրբը շեշտեց այն մեծ ա-

վանդը, որ 1909-ի և 1915-ի դժվարին տարիներին ներդրեց Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը հայ և ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության գործում:

Հավարտ ա. պատարագի սրբազան հոր կողմից կատարվեց տապանաքարի օրհնության արարողություն:

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի տապանաքարի տեղադրումը լավագույն դրսևվորումը հանդիսացավ այն խորին հարգանքի, որ Ադրբեջանի հայ հավատացյալները տածում են նրա հիշատակի նկատմամբ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՎԱՐԴԱՆ ԱՔՂ. ԴԻԼԱՆՅԱՆ

